ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱՓԱ ՔԱՂԱՔԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԺԴ

ՊԱՐՈՆ-ԼՈՅՍ ՆՈՐ ՆՇԱՆԱԳԻՐ

(Տես էջ 217)

Բեջ երանի՛ Կաֆա քաղաք,
Չի նոր նշան քեզ երեւի.
Քոյ քահանայքըն ժողովին՝
Տաւնեն ըզտաւն Պարոն–Լուսին։
Սուրբ Պարոն–Լոյս քեզ երանի՛,
Եւ քո զարմիցն որ ի մարմնի.
Դու Քրիստոսի վրկայ եղեր,
Պարծանք Հայոց տանս Արմենի։
Այս մըթացեալ ժամանակի
Դու լոյս եղեր մէջ աշխարհի,
Եւ սառնացեալ ձմերայնի
Վարդ և շուշան մէջ պարտիզի։

Ո՞վ էր այն երկանիկ նահատակը, որոյ տարաժամ և նախանձելի անմահութիւն մահը այս սրտաշարժ տողերով կը դրուատէր մեզմէ երեք դար և աւելի յառաջագոյն Վրթանէս անունով վարդապետն «յետինս ի Քարոզողաց (1)» ինչպէս ինքզինքը կ'անուանէ, որ տեսող և սքանչացող էր հանդիսի նահատակութեանն, զմարմինն «անմաքուր բաղկաւ իմով գրկեցի և եդի ի տապանի»։

Կաֆայի հայ գաղթականութեան ծնունդ, պարծանք ու պաշտպան նոր վկայ մ'է Պարոն–Լոյս պատանեակն, որ դատաւորաց առջև հասակէն վեր արիութեամբ դատանելով զճշմարտութիւն քրիստոնական հաւատոյ, կարմրերփեան մաքուր արեամբ դրաւ կեանքն, և սուրբ գերեզմանն հռչակաւոր ուխտատեղի եղաւ, և է ցայսօր, յեկեղեցւոջ սրբոցն Թովակիմայ և Աննայի, հաւատացեալ ժողովրդոց։ Կաֆայի գաղթականութեան և իրենց երանդուն բարեպաշտութեամբ կանգնած եկեղեցեաց վրայ խօսած ատենիս, հարկ է համառօտ նուէր մ'ալ ընծայել իր անմոռաց և փառաւոր յիշատակին, քաղելով իր սրբական վարուց համառօտութիւնն ի Նոր Նախիջեւան պահուած Թայամաւուրք գրքէ

1. Անշուշտ ի կարգէ հայ Դոմինիկեան միանձանց, որ բազմաթիւ էին ի ժամանակին ի Թերակղզոջ Տաւրիոյ։

digitised by A.R.A.R.@

մը, զոր նոյն ականատես վկայն վրթանէս վարդապետ շարադրած է։

Աստուածատուր անուն բարեպաշտ և ընտիր հօր զաւակն էր Պարսն–Լոյս պատանի նահատակն, սուլդան Սելիմի թագաւորութեան ժամանակ, և ըստ գեղեցիկ բացատրութեան վկայագրին «ի ձմեռնացեալ ժամանակի վարդ անուշահոտ երևեալ ի մէջ աշխարհի, և վաւեցաւ որպէս հուր ի սէրն Քրիստոսի»։

Հայոց Ռ.Ժ.Զ թուականն էր, և Քրիստոսի սուրբ աստուածայայտնութեան ճրագալուցի օրը։ Եւ ահա յանկարծ մոլեգնեալ խուժան մը դիմեց այս ուխտաւանամեայ պատանեկին վրայ, «որ էր մանուկ տիզ, և տեսլեամբն գեղեցիկ, հասակաւ վայելուչ և լեզուաւ ճարտար, աստուածային շնորհքն զարդարեալ», կ'ամբաստանէին թէ ի քրիստոսական հաւատոց հրաժարած ըլլայ երբեմն ի Կէօղլէվ և այլադաւթիւնն ընդունած. և կը բռնադատէին կը ստիպէին որ թողու զՔրիստոս, կրկին դառնալով իրենց հաւատոց ուղղութեան։ Այսպիսի սուտ և անիրաւ ամբաստանութեան չիկրցաւ հանդուրժել երջանիկ պատանեակն. նայեցաւ չորս կողմը խռնեալ պաշարեալ անխորհուրդ բազմութեան. և արտասուալից աչուքներն վերցընելով յերկինս՝ դիմեց վատահութեամբ առ Քրիստոս, յորմէ երբէք զատուած բաժնուած չէր հոգւովն ու սրտով. ապաւինեցաւ յաղօթս լուսաւորութեան մեծ Հօրն, որ համբերատար չարչարանաց և աստուածուսոյց վարդապետութեամբ՝ անցաւոր ու առօրեայ կենաց փըշալից ու բազմավտանգ ճանապարհին մէջ՝ ցուցեր էր զչափիս փրկութեան, և վկայական մահուամբ իրենց արիւնը դնող սրբոց բազմութենէն սորված արիութեամբ՝ համարձակաձայն դաւանեց իր հաւատքը։

Վրայ հասան՝ բռնեցին կապկրպեցին զինքը, ու դատաւորին ներկայացընելով, սուտ վկայիւք ալ կը ջանային իրենց ամբաստանութիւնը հաւատարմացընել։ Այն բազմավրդով աղաղակին, վրէժխնդիր ու անմեղ արեան ծարաւի նախանձայուզութեան գոռում գոչումին՝ երջանիկ պատանեակն միայն անխռով և անյողդողդ, նախավկային նման պայծառափայլ, հրեշտակատեսիլ և լի հոգւով սրբով, ցրցուց իրեն դէմ եղած ամբաստանութեանց ստութիւնն և հաւատոցը անյեղլի հաստատութիւնն։

Այդպիսի անկեղծ խոստովանութեան առջև տկարացան անզօր մնացին սպառնալիք և աղերս, սաստ և խոստմունք, անգութ տանջանք և առատատուր պարգեւաց յուսադրութիւնք. «Եթէ սրով սպանանէք զիս, կ'ըսէր, եթէ կրակով այրէք, խոստմանց ընդարձակ ծովուն մէջ զիս ուզենաք խեղդել, ես զՔրիստոս պաշտած

digitised by A.R.A.R.@

ոչ ուրանամ»։ Դատաւորը ճանչցաւ պատանեկին անմեղութիւնը. խանդաղատեցաւ անոր հասակին, և քրիստոնէից երաշխաւորութեամբ համոզուեցաւ ազատ թողուլ զինքն՝ դառնալ ի տուն ծնողացն։

Բայց այդպիսի արդարադատ վճռով մը չէին կրնար գոհ մընալ երանելւոյն թշնամիքը. մանաւանդ թէ ալ աւելի զայրացած՝ դատելոյն հետ իրենց ամբաստանութիւնը դարձուցին նաև դատողին դէմ. և տեղւոյն տանիչմանին կամ դենպետին դիմելով՝ արդարութիւն և իրաւունք պահանջեցին՝ և այս կարծրլուած արդարութեան նպատակն ու վախճան՝ անպարտ պատանեկին անմեղ արիւնն էր։ Համաձայնեցաւ դենպետը, հրաման դրկեց դատաւորին որ կրկին բռնել տայ զամբաստանեալն, և ստիպէ ի հաւատափոխութիւն. և եթէ անլուր և անլսող գըտնուի՝ մահուան պատուհասիւ վերցընէ զնա։ Բռնադատեցաւ դատաւորն՝ իր համոզմանն վրայէն անցնելով, կատարել տրուած հրամանը. դրկեց ի տուն, բռնի ի դատաստան զնա կանչելով։ Գորովալիր ծնողքն՝ ահաբեկ և զարհուրած, ջանացին թաքուցանել զպատանին ի տան. և երբ խնդրակք՝ ծնողաց ալ դէմ մնհասաստ սպառնալեաք վեր վայր կը փնտռէին զինքն, երանելի մանուկն ցատկեց դուրս պահուած տեղէն. յօժարակամ և յօժարափոյթ մատոյց ձեռքը կապանաց. ու մինչ ծնողք և ազգականք արտասուալից կը հառաչէին ու անմխիթար կը սգային այն աղնիւ դանձուն ու կենաց անհրաժեշտ ու անմխիթար կորուստը, ինք միայն ուրախ ու զուարթադէմ կը զատուէր ա-նոնց գրկէն, կրկին կը ներկայանար դատաւորին։ Ցեռին փրձ մը ըրաւ նա. ազերսանաց ու սիրագորով թելադրութեանց հետ՝ դրաւ պատանեկին առջևը տխուր մահուան արհաւիրքը. կը յորդորէր խնայել դէթալ այն կեանքին որ իրաւամբ այնչափ սիրելի էր և պատուական ամենուն։ Բայց Ցիսուսի քաղցր ու ըզմայլական հրաւիրանաց դիւրալուր և դիւրանսաց սիրոյը՝ անխռով, անսասան, անտեղիտալի մնաց առ ամենայն երկրաւոր ձայն և հրապուրանք։

Մահը՝ անդարձ հետևանք մը պիտի ըլլար այդպիսի ատատուածախրախոյս արիութեան։

Այդ էր իր անգութ և անգորով թշնամեաց սրտին փափաքը. երանելի պատանեակն և իր կեանքն՝ ալ իրենց ձեռքն էր. մէկէն, ինչպէս կ'աւանդէ վկայագիրն, «առեալ ի մէջ իւրեանց՝ նեղէին զնա և կուփահարէին և զգլուխն ծեծէին. թքանէին յերեսն և ապտակէին, և նա էր ի մէջ նոցա՝ որպէս դառն ի մէջ գայլոց»։

digitised by A.R.A.R.@

Երբ դենպետին առջեւ տարին գնա, դատաւորէ՝ աւելի ողոքանաք խօսեցաւ, խրատեց յորդորեց, պարգեւներ ու մեծութիւն խոստացաւ. և տեսնելով թէ անոնցմէ ամենէն աւելի զօրաւոր կ՚աղդէր ի նա սէրն քրիստոսանուէր, փոխեց լեզուն. տանջանաց ու մահուան խիստ և անողոք սպառնալիքն ու վտանգը յիշեցուց. և պատանին չիվախցաւ, չիլքաւ կամ չտարակուսեցաւ. այլ «զուարթ և պայծառ դիմաք, անահ և աներկիւղ արար պատասխանի իւրաքանչիւր հարցուածոց նորա»։

Մոնչեց բարկութեամբ դենպետն. ապտակի ուժգին հարուածով մը կարծեց ահաբեկել զպատանին. ուր նա՝ Հոգւով սրբով զօրացած՝ ճշմարիտ աշակերտ Քրիստոսի, միւս ծնօտն ալ դարձուց։ Հասկրցաւ դենպետն թէ զուր ջանք էր կարծեն յաղթել անոր մտաց հաստատութեան. ուզեց ղրկել առ սանճախ Պարոն–Լուսին. թերեւս նա աւելի բարեբաստ դտնուի փափաքելի յաղթանակը ձեռք բերելով. բայց հոն ալ՝ նոյն անվկանդ ամրութիւն ի պատանեակն, հաւասար կորանք պարտութեան։

Բանտին մէջ ուր ձդեցին զինքը, և մնաց յոնուարի քսանը-հինգէն մինչև ի հնգեսասան մայիսի, քահանայք և բազմութիւն ժողովրդեան, և որ աւելի սրտաշարժ է, նաև հասակակից քրիստոնեայ մանկունք կը յաճախէին առ նա, կը խրախուսէին, կը քաջալերէին և սուրբ կապանքն համբուրելով՝ երանի՝ կոչուցին նմա։ Հոն ի բանտին զօրացաւ նաև երկնահրաշ այցելութեամբ սրբոյ Լուսաւորչին, և հրեշտակաց Աստուծոյ, որ ըստ վկայագրին «ըստ նմանութեան մանկանց տղայոց երեւեցին նմա. այլ և տէր մեր Յիսուս Քրիստոս՝ բազում զօրաւ և հրեշտակաւք ինքնէր յերկնից ի բանտն, և զօրացուցանէր զծառայն իւր ըստ սրբոյն Պարոն–Լոյս»։

Երանելոյն Յոհաննէս ամէն ջանք ըրին ազատել իրենց սիրելի որդեակը. սրտաճմլիկ ազաչանաք, դրամոց և առատ պարգեւաց խոստմամբ կը յուսային ապրեցընել զնա ի մահուանէ. և նաւով Սեաւ Ծովու վտանգաւոր ճամբան կտրելով՝ գնացին մինչ ի Պոլիս. արտասուագին պաղատանաց ձայնը հասուցին առ թագաւորն, և ազատութեան հրամանագրով դարձան ի Կաֆա. բայց պատանեկին դէմ յուզուած ատելութիւնը այնչափ բուռն էր և սպառնալից, որ դատաւորք չհամարձակեցան այդ արքունի պատուէրը ի գործ դնել, և դատապարտեցին զնա ի մահ։

Գլխատման տեղը ուրախութեամբ կը դիմէր բարեբաստիկն Լոյս–Պարոն. և «բանակք հրեշտակաց Աստուծոյ,— կ՚ըսէ վըկայագիրն,— շուրջ եղեն զնովաւ. և տէր մեր Յիսուս Քրիստոս յայտնապէս երթայր առաջի նորա, և ցուցանէր նմա զան-

digitised by A.R.A.R.@

թառամ պսակն. և սատանայ ամենայն դիւքն իւրովք ի հեռաստանէ կացեալ՝ կրճռէր զատամունս իւր և ողբայր զկործանումն իւր՝ որ յաղթեցաւ ի փոքր մանկանէ միոջէ»։ Երեք անգամ ճամբուն վրայ կանգ առաւ դահիճն՝ խոստմամբք հրապուրելով և մերձաւոր մահուան մը վախով ուզելով ահաբեկել։ իսկ նա ուրախ և զուարթադէմ կը նայէր մերկացեալ սրոյն որ երեք անգամ շողայր անմեղ պարանոցին վրայ, փափաքանք անձկալով այն ցանկալի մահուան։

Մայիսի հնգետասան ու մարերի ութերորդ օրն էր յորում հանդիպեցաւ երջանիկ վկայիս նահատակութիւնը, և մարմինը անթիւ բազմութեամբ ամենայն քրիստոնեայ բնակչաց քաղաքին ամփոփեցաւ պատուով։

Նոր Նախիջեւանի Սուրբ խաչ եկեղեցւոյ Գանձարան՝ գրքէ մը քաղեցք հետեւեալ տողերը ի գովեստ նահատակին։

«Սուրբ Պարոն–Լոյս ծաղիկ ծիրանի,
Կարմիր արեամբ ներկեալ ի մարմնի.
Սուրբ Պարոն–Լոյս նոր շող երփնաբերի՝
Աստղ առաւօտու նոր արուսեկի,
Սուրբ Պարոն–Լոյս նոր վարդ ի թբփի՝
Ի ձմերային սուղ ժամանակի.
Սուրբ Պարոն–Լոյս նոր արմաւենի,
Ցընկեալ ի գնայբս ջրոյն կենդանի.
Սուրբ Պարոն–Լոյս նոր շուշան հովտի
Նարդոս քըրքում զըմուռ ընդ հալուի.
Սուրբ Պարոն–Լոյս պարարտ ձիթենի
Նոր պատուաստեալ յորթըն հայրենի.
Սուրբ Պարոն–Լոյս մաքուր տղաւնի՝
Բարձրաթըռիչ որպէս զարծուի...

ԲՈՂՈՔ

Աշունը անցաւ փառքերով բոլոր
Ցիրեց ձըմեռը դաշտեր՝ սար և ձոր,
Մըղոտագոյն ամպեր երկընքում կապոյտ
Ալեկոծուէին պըտոյտ առ պըտոյտ։
Քօղուեց արևին ոսկեթոյր երես

digitised by A.R.A.R.@